Հաստատում եմ

«Մեհրաբյանի անվան բժշկական

քոլեջ» ՍՊԸ տնօրեն

_____Լ. Մեհրաբյան

«04» 07 2022 թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ ՄԵՀՐԱԲՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ՊՐՈՖԵՍՈՐԱ-ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Մեհրաբյան բժշկական քոլեջի (այսուհետ՝ ՄԲՔ) պրոֆեսորադասախոսական կազմի (այսուհետ՝ ՊԴԿ) որակավորումն ու վերապատրաստումը (այսուհետ՝ ՈՎ) իրականացվում է ՀՀ նախնական մասնագիտական՝արհեստագործական, միջին մասնագիտական կրթության մասին օրենքի դրույթներին համապատասխան և սույն կանոնակարգի հիման վրա: ՈՎ-ը գործընթաց է, որի միջոցով կազմակերպվում և իրականացվում է ՄՈՒՀ-ի դասախոսական անձնակազմի ինովացիոն կրթական ծրագրերով լրացուցիչ մասնագիտական կրթությունը: ՈՎ գործընթացը ներառում է ծրագրեր, որոնք նախատեսված են տեսական և գործնական մեթոդների կիրառմամբ կազմակերպել դասախոսների վերապատրաստումը և որակավորումը: ՈՎ ծրագրի նպատակն է ՄԲՔ-ի դասախոսական անձնակազմին տրամադրել համապատասխան շարունակական և լրացուցիչ մասնագիտական կրթություն, մասնավորապես՝ բարձրացնել ՊԴԿ մասնագիտական հմտությունները և կարողությունները, զարգացնել և խորացնել տեսական և գործնական գիտելիքները, արդիականացնել գիտամանկավարժական, հետազոտական, համակարգչային հմտությունները և կարողությունները՝ տվյալ ժամանակահատվածում բարձրագույն կրթության չափանիշներին համապատասխան:

2. ՈՎ ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. ՊԴԿ որակավորման բարձրացման կազմակերպման և անցկացման գործընթացն իրականացվում է կրթության բարեփոխումների ծրագրի համապատասխան:

2.2. Ծրագրի խնդիրներն են՝

2.2.1. դասավանդման որակի և մեթոդաբանության բարձրացումը,

2.2.2. մասնագիտական ոլորտում նորագույն տեխնոլոգիաների հմտությունների ձեռքբերումը և կիրառումը,

2.2.3. մասնագիտական ոլորտում գիտական նոր հետազոտություններին իրազեկվելը,

2.2.4. լրացուցիչ կրթության կատարելագործումը վերապատրաստումների, սեմինարների կազմակերպման միջոցով,

2.2.5. հեռավար ուսուցման մեթոդների կիրառմամբ դասընթացների կազմակերպումն ու անցկացումը,

2.2.6. մասնագիտական ծրագրերի պատրաստման նպատակով,հետազոտությունների անցկացումը,

2.2.7. ՊԴԿ որակավորման բարձրացումը միջազգային կազմակերպությունների ծրագրերի շրջանակներում:

2.2.8. ծրագրերի և ուսումնամեթոդական ձեռնարկների մշակում՝ ՊԴԿ որակավորման բարձրացման համար,

2.2.9. մասնագետների հմտությունների (գիտամանկավարժական, հոգեբանական և այլն) ձևավորումը, առարկայական ծրագրերի, գնահատման ձևերի նորացումն ու արդիականացումը:

2.3. ՄԲՔ-ն ՈՎ ծրագրի խնդիրների իրականացման նպատակով իրավասու է համագործակցել և խորհրդատվական գործունեություն իրականացնել ՀՀ բուհերի և կրթահամալիրների հետ:

3. ՈՎ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

3.1 ՈՎ դասընթացները կազմակերպում է ՄԲՔ-ն:

3.2 ՄԲՔ-ի յուրաքանչյուր դասախոս պարտավոր է ոչ պակաս, քան հինգ տարին մեկ անցնել վերապատրաստում կամ որակավորման բարձրացում:

3.3 Սահմանված ժամկետի ընթացքում դասախոսը պարտավորվում է աստիճանաբար կուտակել սահմանված կրեդիտների քանակը:

3.4 ՄԲՔ -ի ՈՎ դասընթացները իրականացվում են աշխատանքին զուգընթաց:

3.5 Դասընթացների կատարման վերահսկողությունը վերապահված է ուսումնական գծով տնօրենին, Կրթության որակի ապահովման կենտրոնին, որոնք յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին դասընթացների կատարման հաշվետվություն են ներկայացնում ՄԲՔ-ի մանկավարժական խորհրդին:

3.6 Դասընթացների աշխատանքային լեզուն հայերենը, ռուսերենը և անգլերենն է:

4. ՈՎ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 ՊԴԿ դասընթացների ժամանակացույցներն ուղարկվում են համապատասխան ցիկլային մաս:
4.2 ՄՈՒՀ-ի տնօրենի հրամանով կազմավորվում և հաստատվում են խմբեր, որից հետո ՄՈՒՀ-ի ուսումնական գծով տնօրենի կողմից սահմանվում է դասընթացների ժամանակացույցը:

«Մեհրաբյանի անվան

բժշկական քոլեջ» ՍՊԸ բժշկական քոլեջի

ուսումնական մասի վարիչ՝ /Հ.Ա. Բաբայան /